# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 1-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 19-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Վայք համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվություն ներկայացնելու մասին /զեկուցող՝ Ա. Մանուկյան/:
3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
4.Վայք համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին /զեկուցող՝ Ա. Մանուկյան/:
5. Վայք համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների դիմաց 2024 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
6.Վայոց ձորի մարզի Վայք համայնքի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա. Ղազարյան/:
7.Վայք համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա. Ղազարյան/:
8.Վայք համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ուսման վարձերի և ծնողական վճարների ամսական դրույքաչափեր և արտոնություններ սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
9. Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:

10. Վայք համայնքի Խնձորուտ բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
11. Վայք համայնքի տարածքում գտնվող հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
12. Վայք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունված թիվ 102-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
13.Վայք համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին/զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
14. Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացումներ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին դիմելու մասին /զեկուցող՝ Ա. Ղազարյան/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 2-Ն

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված եզրակացությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
Վայք համայնքի ավագանու
19. 01. 2024թ. թիվ 2-Ն որոշման

## Տարեկան հաշվետվություն
## Վայք համայնքի 2023 թ. բյուջեի կատարման վերաբե րյալ

Համայնքի 2023թ. բյուջեի եկամտային մասում նախատեսվել են 780809,1 հազ. դրամի եկամուտներ, իսկ փաստացի հավաքագրվել է 778421,0 հազ. դրամ եկամուտ, այսինքն՝ առաջադրանքը կատարվել է 99,6%-ով, որից.

/հազ. դրամ/

| | Եկամուտների անվանումը | նախատեսված | փաստացի | կատարման % |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 3500,0 | 1863,8 | 53,3 |
| 2 | Գույքահարկ շենքերի և շինությունների | 800,0 | 453,8 | 56,7 |
| 3 | Անշարժ գույքի հարկ | 18500,0 | 15702,6 | 84,9 |
| 4 | Գույքահարկ փոխադրամիջոցների | 66000,0 | 75950,8 | 115,0 |
| 5 | Տեղական տուրքեր | 10000,0 | 11454,2 | 114,5 |
| 6 | Պետական տուրքեր | 1000,0 | 2466,8 | 246,6 |
| 7 | Վարձակալությունից մուտքեր | 141000,0 | 156525,5 | 111,0 |
| 8 | Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհներ /դոտ. և նպ. հատ./ | 367524,4 | 367982,4 | 100,1 |
| 9 | Պաշտոնական և ոչ պաշ. կապիտալ դրամաշնորհներ | 85738,0 | 67519,4 | 78,8 |
| 10 | Տեղական վճարներ | 29600,0 | 27415,1 | 92,6 |
| 11 | Այլ եկամուտներ | 57146,7 | 51086,6 | 89,4 |
| | Ընդամենը | 780809,1 | 778421,0 | 99,6: |

Համայնքի 2023թ. բյուջեի ծախսային մասում նախատեսվել են 832135,0 հազ. դրամի ծախսեր, իսկ փաստացի կատարվել է 767318,0 հազ. դրամի ծախս, որից.

/հազ. դրամ/

| | Ծախսերի անվանումը | նախատեսված | փաստացի | կատարման % |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքապետարանի պահպանման ծախսեր | 261000,0 | 248268,9 | 95,1 |
| 2 | Աշխատակազմի գծով ընդհանուր բնույթի ծառայություններ | 1999,0 | 1999,0 | 100,0 |
| 3 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 30983,0 | 12539,9 | 40,5 |
| 4 | Գյուղատնտեսություն | 100985,3 | 99785,3 | 98,8 |
| 5 | Ոռոգում | 42430,0 | 41833,7 | 98,6 |
| 6 | Աղբահանում | 72000,0 | 72000,0 | 100,0 |
| 7 | Ճանապարհային տրանսպորտ | 97611,9 | 81322,4 | 83,3 |
| 8 | Ջրամատակարարում | 6000,0 | 0 | 0.0 |
| 9 | Փողոցների լուսավորում | 10000,0 | 9909,3 | 99,1 |
| 10 | Մշակույթի տներ,ակումբներ,կենտրոններ | 22300,0 | 22232,0 | 99,7 |
| 11 | Այլ մշակութային կազմակերպություններ | 44500,0 | 42020,2 | 94,4 |
| 12 | Նախադպրոցական կրթություն | 113358,3 | 113058,2 | 99,7 |
| 13 | Արտադպրոցական դաստիարակություն | 41200,0 | 40965,0 | 99,4 |
| 14 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 6000,0 | 4310,0 | 71,8 |
| 15 | Պահուստային ֆոնդ | 10767,5 | 0 | 0,0 |
| 16 | Տնտեսական հարաբերություններ այլ դասերին չպատկ. | 29000,0 | 22925,9 | 79,0 |
| | Ընդամենը | 832135,0 | 767318,0 | 92,2: |

Համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Վայք համայնքի ավագանու անդամներ Անուշ Արամյանս ու Շուշանիկ Ասլանյանս իրականացրեցինք Վայք համայնքի 2023թ. բյուջետավարման գործընթացի առանձին փուլերի և համայնքի ղեկավարի ներկայացրած 2023թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ ուսումնասիրություններ, որի արդյունքում կատարեցինք հետևյալ եզրակացությունները.

1. Համայնքում բյուջեի կազմման գործընթացը հիմնականում համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ընթացակարգերին և մեթոդական ցուցումներին: Բյուջեի պլանավորման գործընթացը կազմակերպվել է համայնքի զարգացման ծրագրերի՝ ՀԶՀԾ-ի և ՏԱՊ-ի, ինչպես նաև նախորդ տարիների տվյալների հիման վրա: Բյուջեի պլանավորման փուլի ուսումնասիրության արդյունքում արձանագրված խնդիրները հիմնականում վերաբերում են բյուջեի նախագծի կազմման, քննարկման և հաստատման գործընթացի մասնակցայնությանն ու հրապարակայնությանը,որը չի ապահովվել: Բնակիչները շատ դեպքերում հետաքրքրություն չեն դրսևորում այն հարցերում, որոնք իրենց առօրյա գործունեության հետ չեն առնչվում կամ մասամբ են առնչվում:

2. 2023թ. բյուջետավարման գործընթացը համայնքում ամբողջությամբ չի հիմնվել ծրագրային բյուջետավարման մեթոդաբանության ու գործիքների կիրառման վրա: Թեպետ ներդրվել են ծրագրային բյուջեի մեթոդաբանությունը, մոտեցումներն ու գործիքները, սակայն այն գործնականում լիարժեքորեն չի կիրառվել, այսինքն՝ կազմվել է ծախսային բյուջե:

3. Համայնքում 2023թ. բյուջեի կատարման գործընթացը եռամսյակային հաշվետվությունների հրապարակման տեսանկյունից թափանցիկ է: Բյուջեում կատարվող փոփոխությունների հրապարակայնությունը նույնպես ապահովվել է՝ համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքէջում ավագանու որոշումների տեղադրման միջոցով:

4. Վայք համայնքի 2023թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման գործընթացը թափանցիկ և մասնակցային է եղել մասամբ: Համայնքում բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ հանրային լսումներ և քննարկումներ չեն կազմակերպվել: Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության իրազեկման միակ տարբերակը եղել է համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքէջը՝ www.vayk.am :

5. Համայնքի 2023թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ եկամտային ու ծախսային մասերում նախատեսված և փաստացի կատարված ցուցանիշները տոկոսային արտահայտությամբ բարձր են ու գոհացուցիչ:

Հիմք ընդունելով վերոգրյալը համայնքի ղեկավարի ներկայացրած 2023թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը գնահատում ենք դրական:

Վայք համայնքի ավագանու անդամներ՝ Անուշ Արամյան ____________

Շուշանիկ Ասլանյան ____________

18 հունվարի 2024թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 3-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում օրենքով սահմանված տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

2.1.Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել միևնույն ընտանիքից մանկապարտեզ հաճախող երկրորդ և հաջորդ, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ երեխաների համար, և 100 %-
ի չափով նվազեցման արտոնություն սահմանել Արցախյան պատերազմում և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհվածների, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների, հայ-

ադրբեջանական պատերազմում անհայտ բացակայող համարվողների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար:

2.2. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի երկրորդ և հաջորդ երեխաների, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ և 100 %-իչափով նվազեցման արտոնություն սահմանել արցախյան պատերազմում և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհվածների, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների, հայ-ադրբեջանական պատերազմում անհայտ կորած համարվողների երեխաների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ -8 Դեմ -1 Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 4-Ն

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդհոդվածի 5-րդ մասով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Վայք համայնքի 2024 թվականի բյուջեն՝

ա) եկամուտների գծով՝ 873023,7 հազար ՀՀ դրամ,

բ) ծախսերի գծով՝ 935453,6 հազար ՀՀ դրամ,

գ) հավելուրդը / դեֆիցիտը (պակասուրդը)՝ 62429,9 հազար ՀՀ դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ հ ամաձայն հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համած այն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայնհատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամդեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայնհատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայնհատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայնհատված 6-ի:

8. «ՀայաստանիՀանրապետությանբյուջետային համակարգի մասին» ՀՀօրենքի 33-րդհոդվածի 3-րդկետիհամաձայն՝

ա) թույլատրելիհամայնքիղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների գումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 15%-ը:

9. Վայք համայնքի բյուջեի վարչական մասի 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդից 2 299 995.9 (երկու միլիոն երկու հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունհինգ դրամ, ինը լումա) գումարն ուղղել նախորդ բյուջետային տարում բյուջեի վարչական մասիցֆինանսավորման ենթակա,սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների մարման՝ էներգետիկ, կապի, կոմունալ ծառայությունների և այլ կրեդիտորական պարտքերի վճարման նպատակով, իսկ մնացած՝ 60 000 000 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամ գումարն ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

Վայք համայնքի բյուջեի ֆոնդային մասի 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 129961.8 (մեկ հարյուր քսանինը հազար ինը հարյուր վաթսունմեկ դրամ, ութ լումա) գումարն ուղղել կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով (սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում որպես համայնքի ներդրում):

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 5-Ն

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել 2024թ. համար Վայք համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը և տարածվում է 2024թ. հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Վայք համայնքի ավագանու
19.01.2024թ. թիվ 5-Ն որոշման

**Վայք համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը 2024 թվականի համար**

| Հ/հ | Աշխատանքի , ծառայության անվանումը | Չափման միավորը | Վճարի չափը՝ ներառյալ վառելիքը /դրամ/ | Վճարի չափը՝ առանց վառելիքի /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | խոտհունձ | 1 հա | 12000 | 8000 |
| 2 | խոտհավաք | 1 հա | 8000 | 6000 |
| 3 | հակավորում | 1 հատ | 100 | 60 |
| 4 | վար | 1 հա | 30000 | 14000 |
| 5 | ցանք | 1 հա | 12000 | 6000 |
| 6 | փոցխում | 1 հա | 7000 | 4000 |
| 7 | կուլտիվացիա | 1 հա | 12000 | 8000 |
| 8 | հացահատիկի բերքահավաք | 1 հա | 22000 | 14000 |
| 9 | կրկնավար | 1 հա | 22000 | 10000 |
| 10 | փոցխում վարեյահողի | 1 հա | 10000 | 6000 |
| 11 | խոտհունձ կոմբայնով | 1 հա | 18000 | 14000 |
| 12 | հողի փխրեցում ֆրեզով | 1 հա | 110000 | 100000 |
| 13 | էքսկավատորային աշխատանքներ | 1 ժամ | 10000 | 6000 |
| 14 | ուղևորափոխադրման ծառայություններ | 1 կմ | 15 | |
| 15 | ավտոկռունկով աշխատանքներ | 1 օր | | 60000 |
| 16 | բեռնափոխադրման ծառայություններ MAZ-ով | 1 օր | | 40000 |
| 17 | դաշտերի սրսկում | 1 հա | 12000 | 9000 |
| 18 | այգիների սրսկում | 1 հա | 20000 | 15000 |
| 19 | ծառայություններ ճանապարհային մեքենայով | 1 օր | | 40000 |

Ծանոթություն. նշված դրույքաչափերը գործելու են միայն համայնքի բնակիչ հանդիսացող ֆիզիկական անձանց համար, իսկ համայնքի բնակիչ չհանդիսացող ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց համար նշված դրույքաչափերին ավելացվելու է նվս 5000 դրամ, բացառությամբ հավելվածի 3-րդ ու 14-րդ կետերով սահմանված հակավորման և ուղևորափոխադրման ծառայությունների: Իսկ հավելվածի 15-րդ կետով սահմանված ավտոկռունկով աշխատանքների դեպքում բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար գործելու է նաև 1 ժամը - 9000 դրամ դրույքաչափը առանց վառելիքի:

Համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 6-Ա

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2.Հաստատել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:
3.Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված հաստիքացուցակին համապատասխան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:
5.2023 թվականին հաստատված Վայքի համայնքապետարանի կառուցվածքի, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի վերաբերյալ հավելվածի «Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ» բաժնի 7-րդ և 10-րդ կետերը ուժի մեջ համարել մինչև սույն որոշման ընդունման օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ--0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 1
Վայք համայնքի ավագանու
2024թ. հունվարի 19-ի
6-Ա որոշման

# ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

1. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին,
2. Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժին,
3. Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին,
4. Զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին:

Վայքի համայնքապետարանի աշխատակազմ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Ղազարյան

*Հավելված 2*
*Վայք համայնքի ավագանու*
*2024թ. հունվարի 19-ի թիվ 6-Ա*

**Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,**
**Աշխատակիցների թիվը՝ 128**

| Հ/Հ | *Հաստիքի անվանումը* | | *Հաստիքային միավորը* | *Պաշտոնային դրույքաչափը* | *Գումարը* |
|---|---|---|---|---|---|
| | **Քաղաքական պաշտոններ** | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 550,000 | 550,000 |
| 2 | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | | 1 | 445,000 | 445,000 |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ /աշխարհազոր/ | | 1 | 280,000 | 280,000 |
| | **Ընդամենը** | | 3 | | **1,275,000** |
| | | | | | |
| | **Հայեցողական պաշտոններ** | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի խորհրդական | | 1 | 220,000 | 220,000 |
| 2 | Համայնքի ղեկավարի օգնական | | 1 | 190,000 | 190,000 |
| | | | | | |
| | **Ընդամենը** | | **2** | | **410,000** |
| | **Վարչական պաշտոններ** | | | | |
| 1 | Վարչական ղեկավար Ազատեկ | | 1 | 190,000 | 190,000 |
| 2 | Վարչական ղեկավար Արին | | 1 | 190,000 | 190,000 |
| 3 | Վարչական ղեկավար Փոռ | | 1 | 190,000 | 190,000 |
| 4 | Վարչական ղեկավար Ջեղեա | | 1 | 190,000 | 190,000 |
| 5 | Վարչական ղեկավար Զառիթափ | | 1 | 220,000 | 220,000 |
| 6 | Վարչական ղեկավար Գոմք | | 1 | 200,000 | 200,000 |
| 7 | Վարչական ղեկավար Մարտիրոս | | 1 | 200,000 | 200,000 |
| 8 | Վարչական ղեկավար Սերս | | 1 | 190,000 | 190,000 |
| 9 | Վարչական ղեկավար Բարձրունի | | 1 | 200,000 | 200,000 |
| 10 | Վարչական ղեկավար Խնձորուտ | | 1 | 200,000 | 200,000 |
| 11 | Վարչական ղեկավար Նոր Ազնաբերդ | | 1 | 190,000 | 190,000 |
| 12 | Վարչական ղեկավար Սարավան | | 1 | 200,000 | 200,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Վարչական ղեկավար Արտավան | | 1 | 200,000 | 200,000 |
| 14 | Վարչական ղեկավար Հերհեր | | 1 | 200,000 | 200,000 |
| 15 | Վարչական ղեկավար Կարմրաշեն | | 1 | 190,000 | 190,000 |
| | **Ընդամենը** | | 15 | | **2,950,000** |
| | ***Համայնքային ծառայության պաշտոններ*** | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | | 1 | 420,000 | 420,000 |
| 2 | Գլխավոր մասնագետ | | 1 | 300,000 | 300,000 |
| **3** | Գլխավոր մասնագետ /ՔԿԱԳ/ | | 1 | 166,600 | 166,600 |
| 4 | Առաջատար մասնագետ | | 2 | 230000 | 460,000 |
| 5 | Առաջին կարգի մասնագետ | | 2 | 170,000 | 340,000 |
| **6** | Երկրորդ կարգի մասնագետ | | 16 | 150,000 | 2,400,000 |
| | **Ընդամենը** | | **23** | | **4,086,600** |
| | **Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին** | | | | |
| 1 | Բաժնի պետ | | 1 | 330,000 | 330,000 |
| 2 | Բաժնի պետի տեղակալ-ֆինանսիստ | | 1 | 310,000 | 310,000 |
| 3 | Գլխավոր մասնագետ-հաշվապահ | | 1 | 300,000 | 300,000 |
| 4 | Գլխավոր մասնագետ-գնումների գծով | | 1 | 300,000 | 300,000 |
| 5 | Առաջատար մասնագետ | | 5 | 230,000 | 1,150,000 |
| | **Ընդամենը** | | **9** | | **2,390,000** |
| | ***Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ*** | | | | |
| 1 | Բաժնի պետ | | 1 | 330,000 | 330,000 |
| 2 | Գլխավոր մասնագետ-ճարտարապետ | | 1 | 300,000 | 300,000 |
| 3 | Առաջատար մասնագետ/հողաշինարար/ | | 1 | 230,000 | 230,000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | | 2 | 170,000 | 340,000 |
| | **Ընդամենը** | | **5** | | **1,200,000** |
| | **Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին** | | | | |
| 1 | Բաժնի պետ | | 1 | 330,000 | 330,000 |
| 2 | Գլխավոր մասնագետ-գյուղատնտես | | 1 | 300,000 | 300,000 |
| 3 | Առաջատար մասնագետ | | 2 | 230,000 | 460,000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | | 1 | 170,000 | 170,000 |
| | **Ընդամենը** | | **5** | | **1,260,000** |
| | ***Զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և*** | | | | |
| 1 | Բաժնի պետ | | 1 | 330,000 | 330,000 |
| 2 | Գլխավոր մասնագետ /սոցիալական աշխատող/ | | 1 | 300,000 | 300,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Առաջատար մասնագետ-Տնտեսական զարգացման հարցերի գծով պատասխանատու | | 1 | 230,000 | 230,000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | | 2 | 170,000 | 340,000 |
| | | | | | |
| **Ընդամենը** | | | **5** | | **1,200,000** |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝ համայնքային** | | | **47** | | **10,138,600** |
| ***Քաղաքացիական աշխատանք*** | | | | | |
| 1 | Անասնաբույժ /պայմանագրային/ | | 12 | 145,000 | 1,740,000 |
| 2 | Տեղական տուրքեր հավաքագրող | | 1 | 230000 | 230,000 |
| | Ընդամենը | | 12 | | **1,970,000** |
| | **Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ** | | | | |
| 1 | Կազմակերպիչ | | 1 | 180,000 | 180,000 |
| **2** | Կազմակերպիչ (նախատեսվում է գյուղական բնակավայրերում) | | 7 | 110,000 | 770,000 |
| 3 | Վարորդ (համայնքի ղեկավարի) | | 1 | 220,000 | 220,000 |
| 4 | Վարորդ (համայնքի ղեկավարի տեղակալների) | | 1 | 170,000 | 170,000 |
| 5 | Էլեկտրիկ | | 1 | 200,000 | 200,000 |
| 6 | Էլեկտրիկի օգնական | | 1 | 130,000 | 130,000 |
| 7 | Հավաքարար (համայնքապետարանի աշխատակազմի) | | 2 | 110,000 | 220,000 |
| 8 | Հավաքարար (նախատեսվում է գյուղական բնակավայրերում) | | 8 | 110,000 | 880,000 |
| 9 | Գործավար | | 1 | 200,000 | 200,000 |
| 10 | Պահակ | | 2 | 110,000 | 220,000 |
| 11 | Հսկիչ (խմելու ջրի) | | 1 | 150,000 | 150,000 |
| 12 | Բանվոր-ջրակարգավորող | | 12 | 110,000 | 1,320,000 |
| | | | | | |
| **Ընդամենը** | | | **38** | | **4,660,000** |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐԸ** | | | **117.0** | | **21,401,600.0** |

***Աշխատակազմի քարտուղար՝*** ***Ա. Ղազարյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 312-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լրացումը կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատանքային ծանրաբեռնվածությամբ, քանի որ Վայք համայնքում առկա է թվով 3 մանկապարտեզ և թվով 4 արտադպրոցական ուսումնական հաստատություն, որոնց ամենօրյա աշխատանքները համակարգելու և համայնքապետարանի ու պետական գերատեսչությունների հետ կապը և կրթական ծրագրերի իրականացման աշխատանքները ապահովելու անհրաժեշտություն է առաջացել: Ելնելով համայնքի ղեկավարի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական ոլորտում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ապահովելու նպատակով նախատեսվել է համայնքապետարանի աշխատակազմում ավելացնել գլխավոր մասնագետի հաստիք՝ հաշվի առնելով ՏԻՄ օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների պատշաճ և որակով կատարումը, ինչպես նաև նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական ոլորտում պահանջվող աշխատանքների բաշխում կատարելու անհրաժեշտությունը:

Հարգանքով՝

Աշխատակազմի քարտուղար Ա.Ղազարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

*19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 7-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Վայք համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.
1)«Վայք համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի:
2)«Վայք համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 2 հավելվածի:
3)«Զառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 3 հավելվածի:
4)«Վայքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 4 հավելվածի:
5)«Խաչատուր Ներսիսյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 5 հավելվածի:
6)«Վայք համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 6 հավելվածի:
7)«Գյուղատնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 7 հավելվածի:
8)«Վայք համայնքի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 9 հավելվածի:
9)«Վայքի բարեկարգում » ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 8 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:
3.2023 թվականին հաստատված Վայքի համայնքի «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի վերաբերյալ հավելվածի 12-րդ կետերը ուժի մեջ համարել մինչև սույն որոշման ընդունման օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆԻՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
Վայք համայնքի ավագանու
19 հունվարի 2024թ. թիվ 7-Ն որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 26

| Հ/հ | Պաշտոնը /հաստիքի անվանումը/ | Դրույքը / հաստիքային միավորը/ | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Աշխատավարձը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 210000 | 210000 |
| 2 | Մեթոդիստ | 1 | 115000 | 115000 |
| 3 | Երաժշտության դաստիարակ | 1 | 130000 | 130000 |
| 4 | Դաստիարակ | 1.12 | 130000 | 145600 |
| 5 | Դաստիարակ | 1.12 | 130000 | 145600 |
| 6 | Դաստիարակ | 1.12 | 130000 | 145600 |
| 7 | Դաստիարակ | 0.56 | 130000 | 72800 |
| 8 | Դաստիարակ | 0.56 | 130000 | 72800 |
| 9 | Դաստիարակ | 1.12 | 130000 | 145600 |
| 10 | Հաշվապահ | 1 | 160000 | 160000 |
| 11 | Դաստիարակի օգնական | 1 | 120000 | 120000 |
| 12 | Դաստիարակի օգնական | 1 | 120000 | 120000 |
| 13 | Դաստիարակի օգնական | 1 | 120000 | 120000 |
| 14 | Դաստիարակի օգնական | 1 | 120000 | 120000 |
| 15 | Դաստիարակի օգնական | 1 | 120000 | 120000 |
| 16 | Դաստիարակի օգնական | 1 | 120000 | 120000 |
| 17 | Բուժքույր | 1 | 120000 | 120000 |
| 18 | Խոհարար | 1 | 120000 | 120000 |
| 19 | Խոհարարի օգնական | 1 | 120000 | 120000 |
| 20 | Օժանդակ բանվոր | 0.5 | 115000 | 57500 |
| 21 | Տնտեսվար | 1 | 130000 | 130000 |
| 22 | Լվացարար | 0.75 | 160000 | 120000 |
| 23 | Պահակ | 1 | 115000 | 115000 |
| 24 | Դռնապահ | 1 | 115000 | 115000 |
| 25 | Հավաքարար | 1 | 115000 | 115000 |
